Շիրակ

Շիրակ բնակավայրի վարչական տարածքը կազմում է 1673,77 հա, բնակչությունը՝ 1075 մարդ։ Շիրակ գյուղի հեռավորությունը մարզկենտրոնից 7 կմ է: Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1650 մետր բարձրության վրա: 1944 թվականին գյուղը Ավետիք Իսահակյանի միջամտությամբ անվանվել է Շիրակ: Գյուղի տարածքով է անցնում Գյումրի-Վանաձոր ճանապարհը, որն անցանելի է տարվա բոլոր եղանակներին: Համայնքի տարածքում գտնվում է «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերության Հացիկ - Ջաջուռ կայարանը: Համայնքի ջրամատակարարումն իրականացվում է Ղազանչիի ջրատարից և արտեզյան ջրաղբյուրներից: Գյուղում գործում է միջնակարգ դպրոցը, առաջիկայում շահագործման կհանձնվի նորակառույց մանկապարտեզի շենքը: Բնակչությունը զբաղվում է հացահատիկային, բանջարաբոստանային, կերային կուլտուրաների մշակությամբ, անասնապահությամբ: